ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. հոկտեմբերի 6-ին թողարկված՝ «Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագրի (ՈՀԱԾ)» շրջանակներում "Ազատ գետից Մխչյանի պոմպակայանի I-ին աստիճանի հեռացնող ջրանցքի, Բարձրունու և Ծիծեռնակաբերդի պոմպակայանների, Արտաշատի ջրանցքի 5-րդ բաժանարարի ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցում" ISMP/NCB/CW-17/001 մրցույթի Առաջարկներ Ներկայացնելու Հրավերով (ԱՆՀ) և Մրցութային Փաստաթղթերով սահմանված

գնահատման և որակավորման չափանիշների փոփոխության և մրցութային առաջարկների ներկայացման նոր վերջնաժամկետի մասին

Հիմք ընդունելով վերոհիշյալ մրցութային փաստաթղթերի «Հրահանգներ մրցույթի մասնակիցներին (ՀՄՄ)» 8-րդ և 22.2-րդ հոդվածները 2018թ. հոկտեմբերի 6-ին «Հայաստանի Հանրապետություն» թիվ 169 (6925) օրաթերթում, «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ի վեբ կայքում (www.piu.am), ինչպես նաև 2018թ. հոկտեմբերի 10-ին «ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ» (www.gnumner.am) վեբ կայքում հրապարակված Առաջարկներ Ներկայացնելու Հրավերի (ԱՆՀ) 2-րդ պարբերության 4-րդ ենթակետում, 5-րդ և 6-րդ պարբերությունում կատարվել են հետևալ փոփոխությունները, որի արդյունքում ԱՆՀ-ի 2-րդ պարբերության 4-րդ ենթակետն ու ԱՆՀ-ի 5-րդ և 6-րդ պարբերությունները այսուհետ կարդալ հետևյալ խմբագրությամբ.

1. ԱՆՀ-ի 2-րդ պարբերության 4-րդ ենթակետը, որը նախատեսում էր հետևյալը՝

- Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում 2013թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայցման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն հետևյալ հիմնական աշխատանքների նվազագույն ծավալների հաջող կատարմանը՝ որպես Գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, Կառավարման Կապալառու կամ Ենթակապալառու.՝
  - *Հողային աշխատանքներ՝ առնվազն 61,000մ3 (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում)*
  - *Խողովակաշար՝ առնվազն 6,000մ՝ 300մմ տրամագծից ոչ պակաս (վերը նշված ժամանակահատվածում ցանկացած տարվա ընթացքում)*

Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը յուրաքանչյուր տեսակի աշխատանքի (Հողային աշխատանքներ և խողովակաշար) համար կարող է ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք), եթե դրանք իրականացվել են նույն ժամանակահատվածում:»

<u>կիրառելի չէ տվյալ մրցույթում որպես որակավորման չափանիշ և հաշվի չի առնվելու «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ի («Պատվիրատու») առաջարկների գնահատման ժամանակ:</u>

2. ԱՆՀ-ի 5-րդ պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ.

«Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են անվճար ստանալ մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը (միայն էլեկտրոնային տարբերակ) հայերեն լեզվով, ներառյալ Մրցութային փաստաթղթերում կատարված «Փոփոխությունները» և մասնակիցների կողմից ստացված պարզաբանումներն ու Պատվիրատուի պատասխանները՝ ներկայացնելով գրավոր դիմում* ներքոհիշյալ հասցեով (մրցութային փաստաթղթերը կուղարկվեն մրցույթի շահագրգիռ մասնակիցներին ֆայլերի փոխանցման ինտերնետային համակարգի միջոցով)»:

3. ԱՆՀ-ի 6-րդ պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ.

«Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով 2018թ. դեկտեմբերի 26-ին ժամը 15:00-ին (Երևանի ժամանակով) կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում չի թույլատրվում: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ 2018թ. դեկտեմբերի 26-ին ժամը 15:10-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում»:

2018թ. հոկտեմբերի 6-ին թողարկված Մրցութային փաստաթղթերի (ներառյալ Մրցութային փաստաթղթերում կատարված «Փոփոխությունները»), ինչպես նաև ԱՆՀ-ի մյուս բոլոր պայմանները և դրույթները մնում են անփոփոխ:

Վերևում հիշատակվող հասցեն է.

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Պրն. Տիգրան Քալանթարյան, տնօրենի պաշտոնակատար
Պրն. Մրտին Չարյան, գնումների համակարգող
ՀՀ, Երևան 0010, Վարդանանց փակուղի 8 (5-րդ հարկ)
Հեռ՝ (+37410) 52-25-50 (ընդունարան); 56-03-62 (գնումների բաժին)
Էլ. Փոստ (գրավոր դիմումի համար)՝ tkalantaryan@wsdp.am; mcharyan@wsdp.am
Ինտերնետային էջ. www.piu.am